

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

*Արցախի պետական համալսարանի խորհրդի՝ 2019թ. մարտի 5-ի  
N 3 նիստի*

Նիստին ներկա էին խորհրդի 28 անդամներից 26-ը:  
*Հրավիրված էին խորհրդի անդամ չհանդիսացող, ԱրՊՀ գիտխորհրդի  
անդամներ և ԱՀ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:*

*Նախագահությամբ՝* Գրիգորի Իգորի Մարտիրոսյանի  
*Քարտուղարությամբ՝* Լուսինե Գեորգիի Մարգարյանի

## ՕՐԱԿԱՐԳ

1. Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվության մասին

*/Զեկուցող՝ ռեկտոր Ա. Յու. Սարգսյան/*

2. Արցախի պետական համալսարանի 2018 ֆինանսական տարվա արդյունքների մասին

*/Զեկուցող՝ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյան /*

3. Արցախի պետական համալսարանի 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի մասին

*/Զեկուցող՝ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյան /*

4. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ռազմավարական ծրագիրը /2019-2023 թթ./ հաստատելու և ԱրՊՀ խորհրդի 2018թ. մարտի 19-ի N1-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

*/Զեկուցող՝ ռեկտոր Ա. Յու. Սարգսյան/*

## 5. Այլ հարցեր

*1. Լսեցին՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը, որը ներկայացրեց ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը:*

Ըստ համալսարանի գործունեության կազմակերպման բաղադրիչների՝ ԱրՊՀ ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը մանրամասն ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը: *Հաշվետվությունը կցվում է. առդիր 10 էջ*: Հաշվետվությունն ամփոփվեց համալսարանի մեկամյա գործունեությունը լուսաբանող ֆիլմով:

Ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարեց **հարցերի և ելույթների հերթագրում**:

**Հարցի համար հերթագրվեց՝**

**1. Մարտիրոսյան Գրիգորի/2 հարց/**

**Ելույթի համար հերթագրվեցին՝**

**1. Մանգասարյան Ռուզաննա**

**2. Այդինյան Շահեն**

**3. Գալստյան Հասմիկ**

**4. Խաչատրյան Դիանա**

Ըստ հերթագրման՝ ռեկտորին հարց տալու հնարավորություն տրվեց:

**Հարց 1-ին.** – Ուսանողական արտահամալսարանական շարժունություն ապահովող ծրագրեր իրականացնելիս ուսանողների ընտրությունն ի՞նչ սկզբունքով է իրականացվում:

**Պատասխան 1-ին.** – Այդ ծրագրերն իրականացնելիս արդեն իսկ որոշ սահմանափակում կար. քանի որ ուսուցումն արտերկրում է և հիմնականում հասարակագիտական ուղղվածությամբ, ուսուցման մեկնողը պետք է օտար լեզվով հաղորդակցվելու հմտություն ունենա: Եվ ըստ այդմ՝ ընտրված ուսանողները բանասիրական ֆակուլտետի *Անգլերեն լեզու և գրականություն, Թարգմանչական գործ* մասնագիտությունների ուսանողներ էին և իրենց խմբերում ամենաբարձր առաջադիմություն ունեցողները:

**Հարց 2-րդ.** – Արտերկրում դասախոսների վերապատրաստման մասով որևէ ծրագիր իրականացվե՞լ է:

**Պատասխան 2-րդ.** – Արտերկրում դասախոսների վերապատրաստման մասով որևէ ծրագիր չի իրականացվել. դասախոսների գործուղումների տարածքն այդ առումով ՀՀ-ով սահամանափակվել է: Ընդ որում գործուղվող դասախոսներն էլ հիմնականում դասընթացին մասնակցելու կարգավիճակով էին ներկայանում, դասախոսի փոխանակման գործող ծրագիր չկար:

Ըստ հերթագրման՝ ելույթի հնարավորություն տրվեց:

**Ելույթ 1-ին.** – Ռ. Մանգասարյանը ողջունեց ու գնահատեց կատարված աշխատանքը, կարևորեց հատկապես իրավական-նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծման իրողությունը:

Իբրև նկատառումներ՝ նշեց ա/գործատու-բուհ համագործակցության թույլ կապը՝ խորհրդի նախագահին խնդրելով այդ հարցում աջակից լինել, բ/դասախոսական կազմի՝ արտերկրում վերապատրաստման խնդիրը, գ/

դասախոսական կազմի տարբերակված մոտեցմամբ վարձատրման համակարգի անհրաժեշտությունը:

Ռ. Մանգասարյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

**Ելույթ 2-րդ.** \_Շ. Այդինյանը արդյունավետ գնահատեց կատարված աշխատանքը՝ կարևորելով բուհում ներդրված հաշվետվողական համակարգի առկայությունը, ինչն ապահովում է բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքի իրական գնահատումը: Նա նշեց նաև, որ բուհ-հասարակություն-տնտեսություն համագործակցության գործող շրջանակներն ընդլայնելն օրախնդիր է, և առկա մակարդակը բավարար չէ մատուցվող կրթական ծառայությունները երկրի կարիքներին համապատասխանեցնելու պահանջն իրագործելու համար: Անհրաժեշտություն են նաև նյութատեխնիկական բազայի վերազինումն ու մասնագիտական գրականության ձեռքբերումը:

Շ. Այդինյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

**Ելույթ 3-րդ.** - Հ. Գալստյանը բարձր գնահատեց կատարված աշխատանքը, հատկանշեց տարվա ձեռքբերումը՝ կենսաբանական լաբորատորիայի ստեղծումը, որը հիմնարար նշանակություն կունենա բնագիտական ուղղությամբ մասնագիտությունների զարգացման համար: Նա կարևորեց նաև արտասահմանյան բուհերի կրթափորձի ուսումնասիրությունը և դասավանդման արդյունավոր մեթոդների ընդօրինակումը:

Հ. Գալստյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

**Ելույթ 4-րդ.**-ԱրՊՀ ուսխորհրդի նախագահ, խորհրդի անդամ Դ. Խաչատրյանը նույնպես բարձր գնահատեց 2017-2018 ուս. տարում կատարած աշխատանքը: Առանձնապես կարևորեց դեկավարության կողմից ստեղծված համագործակցային բաց ու թափանցիկ պայմանները, որոնք նպաստեցին ուսանող-դեկավարություն առողջ հարաբերությունների ձևավորմանը: Նա նշեց, որ ուսանողական լուրջ նախաձեռնություններն իրագործվել են ու դարձել թե՛ բուհի, թե՛ ուսանողի վարկանիշի բարձր ցուցիչ: Հատկանշվեց իրականացվող ուսանողամետ ու ուսանողակենտրոն քաղաքականությունը, արժևորվեց իրականացված կրթադաստիարակաչական միջոցառումները, որոնք ուղղված էին թե՛ ուսանողի մասնագիտական ներուժի բացահայտմանը, թե՛ անձնային որակների զարգացմանը:

Դ. Խաչատրյանն առաջարկեց Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքը գնահատել *բավարար*:

Ամփոփելով և հիմք ընդունելով ելույթ ունեցողների գնահատականները՝ խորհրդի նախագահն առաջարկեց Արցախի պետական համալսարանի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքները գնահատել *բավարար*:

### **1. Որոշեցին՝**

Արցախի պետական համալսարանի ռեկտորի 2017-2018 ուսումնական տարում կատարած աշխատանքները գնահատել *բավարար*:

### **2. Լսեցին՝**

*Արցախի պետական համալսարանի 2018 ֆինանսական տարվա արդյունքների մասին:*

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանն ամփոփ ներկայացրեց 2018թ. նախահաշվի կատարողականը: /*Համապատասխան փաստաթուղթը կցվում է. առդիր 1 էջ:*

Զեկուցումից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի հերթագրում:

Հարցեր չգրանցվեցին :

Խորհրդի նախագահն առաջարկեց քվեարկել:

### **2. Որոշեցին՝**

ԱրՊՀ 2018թ. ֆինանսական տարվա արդյունքները գնահատել *բավարար*:

### **3. Լսեցին՝**

*Արցախի պետական համալսարանի 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի մասին.*

Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Գրիգորյանը ներկայացրեց 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը: /*Համապատասխան փաստաթուղթը կցվում է. առդիր 1 էջ:*

Զեկուցումից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի և առաջարկությունների հերթագրում:

Հարցեր չգրանցվեցին, առաջարկության համար հերթագրվեց Լ. Մարգարյանը:

**Առաջարկություն.-**Լ. Մարգարյանը ներկայացրեց ԱրՊՀ գիտական խորհրդի 2019թ. փետրվարի 27-ի նիստի որոշումը, այն է՝ 2019թ. նախահաշվի մեջ փոփոխություն կատարելու առաջարկությամբ դիմել ԱրՊՀ խորհրդին: /*Առաջարկությունը կցվում է. առդիր 1 էջ:*

### **3. Որոշեցին՝**

ա/ բավարարել ԱրՊՀ գիտական խորհրդի առաջարկությունը.

բ/ հաստատել Արցախի պետական համալսարանի 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համապատասխան փոփոխությամբ: /*Նախահաշվի՝ փոփոխությամբ տարբերակը կցվում է. առդիր 1 էջ:*

#### **4. Լսեցին՝**

«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ռազմավարական ծրագիրը /2019-2023 թթ./ հաստատելու և ԱրՊՀ խորհրդի 2018թ. մարտի 19-ի N1-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԱրՊՀ ռազմավարական ծրագիրը /2019-2023թթ./ ներկայացրեց ռեկտոր Ա. Յու. Սարգսյանը: / Ծրագիրը կցվում է. առդիր 10 էջ:/

Զեկուցումից հետո խորհրդի նախագահը հայտարարեց հարցերի և առաջարկությունների հերթագրում:

Հարցեր և առաջարկություններ չգրանցվեցին:

Խորհրդի նախագահն առաջարկեց քվեարկել:

#### **4. Որոշեցին՝**

Հաստատել «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռազմավարական ծրագիրը /2019-2023 թթ./՝ ԱրՊՀ խորհրդի 2018թ. մարտի 19-ի N1-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելով:

#### **5. Լսեցին՝**

Այլ հարցերի շրջանակում արարողակարգային 2 հարց ընդգրկվեց. ա/ ռեկտոր Ա. Յու Սարգսյանի առաջարկությամբ՝

ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ԱրՊՀ *Ոսկե մեդալով* պարգևատրված նախկին ռեկտոր, ԱՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Մ. Մինասյանին *Ոսկե մեդալը* հանձնելու մասին հարցը, բ/ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանի առաջարկությամբ՝

2017-2018 ուստարվա «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի հաղթողներին պարգևատրելու հարցը:

#### **5.Որոշեցին՝**

Ի գիտություն ընդունել պարգևատրման մասին տեղեկությունը:

Նիստի նախագահ՝  
Քարտուղար՝

Գ. Ի. Մարտիրոսյան  
Լ. Գ. Մարգարյան

Առդիր 29 էջ

ք. Ստեփանակերտ  
08.03.2019